Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի <<Հառիճի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի **<< Մաթեմատիկա>> (14 դասաժամ)** , **<<ՀԵՊ>>(2 դասաժամ)** , ուսուցչի թափուր տեղի համար: Մրցույթը անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորման փուլը անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայկացնել՝

-դիմում /ՁԵ 1/, մեկ լուսանկար 3 x4 չափի,
- Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ / դիպլոմ/,
- անձը հաստատող փաստաթուղթ,
-<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը / առկայության դեպքում/,
- Ինքնակենսագրություն /ՁԵ5/
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ:
-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր
/ առկայության դեպքում/,
- Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2022թ-ի ապրիլի 28-ի N596-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան՝ հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն(մասնակցած լինելու դեպքում):
-<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ն կետի (առկայության դեպքում նաև 2-րդ կետի) պահանջվող համապատասխան փաստաթուղթ:
-<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջին համապատասխան տեղեկանք՝ բարձրագույն ուսումնական հաստատությունից:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:
Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն անբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:
Փաստաթղթերը ընդունվում են նոյեմբերի 4-ից մինչև նոյեմբերի 15-ը ներառյալ ,ամեն օր՝ ժամը 10:00- 15:00 , բացի շաբաթ , կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:
Մրցույթը տեղի կունենա նոյեմբերի 20-ին՝ ժամը 14:00-ին ՀՀ Շիրակի մարզի <<Հառիճի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում , հասցեն գ. Հառիճ փ6,շենք 7
Տեղեկությունների համար զանգահարել՝ /093/ 044-375 հեռախոսահամարով:

Տնօրենի պ/կ՝ Լ. Սարգսյան

01.11.2024թ